EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ՍԱՂԱԹԵԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*(գանգատ թիվ 31155/13)*

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

8 հոկտեմբերի 2020թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

**Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek]՝ *Նախագահ*,

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]՝ *դատավորներ*,

եւ Լիվ Տիգերշտետ [Liv Tigerstedt]՝ Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար,

2020 թվականի սեպտեմբերի 17-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2013 թվականի ապրիլի 23-ին Դատարան ներկայացված գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է պրակտիկ գործունեությամբ չզբաղվող իրավաբան տկն Մ. Բաղդասարյանը:

3. Հայաստանի կառավարությունը (Կառավարություն) ծանուցվել է գանգատի մասին:

ՓԱՍՏԵՐԸ

4. Դիմումատուի տվյալներն ու գանգատին վերաբերող տեղեկությունները ներկայացված են կից աղյուսակում:

5. Դիմումատուն բողոք է ներկայացրել քրեական գործով վարույթի չափազանց երկար տևողության առնչությամբ:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

6. Դիմումատուն բողոքել է, որ տվյալ քրեական գործով վարույթի տևողությունը չի համապատասխանել «ողջամիտ ժամկետի» պահանջին: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա՝ համաձայն որի.

**6-րդ հոդվածի 1-ին կետ**

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի ... տրիբունալի կողմից ողջամիտ ժամկետում ... լսումների իրավունք...»:

7. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն վերջնական որոշումը կայացնելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, Դատարան չի դիմել: Մասնավորապես, դիմումատուն պետք է Դատարան դիմեր կա՛մ 2012 թվականի ապրիլի 6-ից՝ նրա նկատմամբ մեղադրանքից հրաժարվելու մասին դատախազի որոշման ամսաթվից, կա՛մ 2012 թվականի մայիսի 17-ից՝ նրան արդարացնելու մասին Մարզային դատարանի որոշման ամսաթվից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

8. Դիմումատուն պնդել է, որ իր գործով վարույթն ավարտվել է Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 24-ին կայացրած վերջնական

որոշմամբ, որով անփոփոխ է թողնվել Մարզային դատարանի 2012 թվականի մայիսի 17-ի որոշումը:

9. Դատարանը նկատում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ներպետական վերջնական որոշումը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումն է, որով Մարզային դատարանի կողմից դիմումատուին արդարացնելը հաստատվել է վերջին ատյանում: Հետեւաբար դիմումատուն, իր գանգատը ներկայացնելով 2013 թվականի ապրիլի 23-ին, պահպանել է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետը:

10. Հետեւաբար Դատարանը մերժում է այս առնչությամբ Կառավարության առարկությունը:

11. Դատարանը կրկին նշում է, որ վարույթի տեւողության ողջամտությունը պետք է գնահատվի՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից եւ հաշվի առնելով հետեւյալ չափորոշիչները՝ գործի բարդությունը, դիմումատուի եւ համապատասխան մարմինների վարքագիծը, եւ այն, թե վեճի մեջ դիմումատուի համար որն է եղել խնդրո առարկան (տե՛ս, ի թիվս մի շարք այլ վճիռների, *Պելիսիեն եւ Սասին ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Pélissier and Sassi v. France* [GC]], թիվ 25444/94, § 67, ՄԻԵԴ 1999-II):

12. Դատարանը *Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի* [Grigoryan v. Armenia] (թիվ 3627/06, 2012 թվականի հուլիսի 10) նախադեպային գործում արդեն հայտնաբերել է խախտում այն հարցերի առնչությամբ, որոնք համանման են սույն գործում բարձրացված հարցերին:

13. Դատարանը, ուսումնասիրելով իրեն ներկայացված բոլոր նյութերը, ազգային մակարդակով վարույթի ամբողջ տեւողությունը հիմնավորող որեւէ փաստ կամ փաստարկ չի գտել: Հաշվի առնելով քննվող հարցի վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը համարում է, որ տվյալ գործում վարույթի տեւողությունը չափազանց երկար է եղել եւ չի բավարարել «ողջամիտ ժամկետի» պահանջը:

14. Հետեւաբար այս բողոքներն ընդունելի են եւ բացահայտում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

15. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

16. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը (տե՛ս, մասնավորապես, *Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի* [Grigoryan v. Armenia], թիվ 3627/06, § 135, 2012 թվականի հուլիսի 10)՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել կից աղյուսակում նշված գումարները: Այն մերժում է դիմումատուի կողմից ներկայացված արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

17. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

2. Վճռում է, որ քրեական գործով վարույթի տեւողության չափազանց երկար լինելու առնչությամբ հայտնաբերվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.

3. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի կից աղյուսակում նշված գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2020 թվականի հոկտեմբերի 8-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

| | |
|---|---|
| Լիվ Տիգերշտեդտ | Քրշիշթոֆ Վոյտիչեկ |
| Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար | Նախագահ |

ՍԱՂԱԹԵԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

# ՀԱՎԵԼՎԱԾ

## Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված բողոքներ պարունակող գանգատ

(քրեական գործով վարույթի չափազանց երկար տեւողություն)

| Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը | Դիմումատուի անունը Ծննդյան ամսաթիվը | Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը | Վարույթն սկսելու ամսաթիվը | Վարույթն ավարտելու ամսաթիվը | Ընդհանուր տեւողությունը Ատյանների մակարդակը | Յուրաքանչյուր դիմումատուին ոչ նյութական վնասի համար շնորհվող գումարը (եվրոյով)[1] | Յուրաքանչյուր գանգատի մասով ծախսերի եւ ծախքերի համար շնորհվող գումարը (եվրոյով)[2] |
|---|---|---|---|---|---|---|---|
| 31155/13 23.04.2013թ. | **Անահիտ Սաղաթելյան** 10.06.1959թ. | Բաղդասարյան Մերի Երեւան | 01.03.2000թ | 24.10.2012թ. | 12 տարի, 7 ամիս եւ 24 օր 3 ատյանների մակարդակ | 4 200 | 800 |

[1] Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:

[2] Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ: